№ 97 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25 1894 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25 № 97

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժամանակի պահանջը Թիւրք-պարսկական սահմանագլուխը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ խօլերայի մասին. Նամակ Էջմիածնից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միտինգ լօրդերի ժողովի դէմ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ժողովրդական հերոսներ.

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋԸ

Մի շատ աչքի ընկնող երևոյթ տեղի ունի այժմ Գերմանիայում։ Հաստատ, որոշ ծրագրով, երկար ժամանակ գոյութիւն ունեցող մի կուսակցութիւն ընդհանուր ժողով է կազմում՝ իր ծրագրում փոփոխութիւններ մտցնելու նպատակով։ Այդ կուսակցութիւնը ազատ-մտածողների կուսակցութիւնն է, որի ներկայացուցիչն է Րիխտերը։

Այդ կուսակցութիւնը մեծ պարտութիւն կրեց վերջին ընտրութիւնների ժամանակ։ Նրա համակրողները անցան քաղաքական այն կուսակցութիւնների կողմը, որոնց աւելի մօտ էին իրանց համոզմունքներով։

Այդ պարտութիւնից յետոյ մեծ իրարանցում սկսվեց ազատ-մտածողների կուսակցութեան մէջ. մանր և մասնաւոր քննադատութիւնները, կարծիքների մէջ եղած աննշան հակառակութիւնները ստացան ընդհանուր նշանակութիւն։ Այն բոլոր անձինք, որոնք վաղուց ի վեր առաջարկում էին ծրագրի մի քանի կարևոր կէտերը փոփոխութեան ենթարկել, այժմ ձայն բարձրացրին և հրաւէր կարդացին կազմել մի խորհրդակցական մեծ ժողով։ Երկար վիճաբանութիւններից յետոյ այդ առաջարկութիւնը ընդունվեց և ժողովի տեղը նշանակվեց Էյզենախ քաղաքը։

Նախ քան ժողով գնալը շատերը պահանջում էին, որ վաղօրօք յայտնի լինեն այն փոփոխութիւնները, որոնց մասին պէտք է խորհրդակցեն ժողովին մասնակցողները։ Իբրև պատասխան այդ պահանջի, Նորերս հրատարակվեց մի նախնական ծրագիր, որի հեղինակը համարվում է Րիխտեր։

„Ազատ մտածող կուսակցութեան նպատակն է՝ ամրացնել Գերմանիայի ազգային միութիւնը, զարգացնել քաղաքական ազատութիւնը և բարձրացնել ժողովրդի բարօրութիւնը“—ահա ինչ հիմնական խօսքերով է սկսվում ծրագիրը։ Դրանց հետևող վեց գլուխներում ամփոփված են կուսակցութեան ծրագրի բոլոր կէտերը։

Այժմեան և հին ծրագրի մէջ արած ամենամեծ փոփոխութիւնները վերաբերում են տնտեսական բարեփոխութիւններին։ Նոր ծրագիրը զիջումներ է անում նոր հոսանքներին և չէ մերժում պետութեան միջամտութեան կարևորութիւնը, ինչպէս այդ լինում էր մինչև այժմ։ Ճիշդ է, այդ զիջողութեան սահմանները դեռ լայն ծաւալ չունեն, բայց և այնպէս նախկին յամառութիւնը կոտրված է և տնտեսական կարևոր բարեփոխութիւնների դուռը բացված է։

Րիխտեր և իր համախոհները պատկանում են ազատամիտների այն խմբին, որոնք տնտեսական խնդիրների մէջ պաշտպան են հանդիսանում անսահման ինքնագործունէութեան գաղափարին, և որոնք մրցումը, անհատական մաքառումը տնտեսական առաջադիմութեան և հանրային բարօրութեան գլխաւոր հիմքն են համարում։ Ոչ ոք չը պէտք է խառնվի տնտեսական յարաբերութիւնների մէջ, ոչ ոք չը պէտք է միջամտի՝ ազատ մրցման արտայայտութիւնները փոփոխելու նպատակով, ոչ ոք չը պէտք է ձնշում գործ դնի աշխատանք առաջարկողի և աշխատանք վարձատրողի պայմանախօսութեան վրա,—ահա այն տեսակէտը, որով ղեկավարվում են տնտեսական անսահման ազատութեան պաշտպանները, որոնք յաճախ յայտնի են մանչեստրեաններ անունով։

Դրանք դէմ էին, բանւորների վիճակը ապահովացնելու նպատակով, գործարանատէրերի իրաւունքները յայտնի օրէնքներով սահմանափակելու համար ազգային ժողովի առաջարկած բարեփոխութիւններին։ Մինչդեռ պետութեան պաշտպանութեան կարևորութիւնը տնտեսական կեանքի յայտնի կէտերում այնքան ժողովրդականութիւն ստացաւ, Նրա բարերար ազդեցութիւնը այնքան գնահատվեց գործնական կեանքում, որ Նրա դէմ խօսելը և գործելը անժողովրդական էր դարձնում այդ նոյն հակառակորդներին։

Եւ ահա ազատ-մտածող կուսակցութեան ազդեցիկ ներկայացուցիչները, լաւ քննելով և կշռելով իրերի դրութիւնը, ընդունում են նոր փոփոխութիւն իրանց ծրագրի մէջ, որով աւելի հնարաւոր է դառնում նպաստել ազգային բարօրութեան գաղափարին։

Նոր ծրագրի մէջ շատ լաւ տպաւորութիւն է թողնում այն կէտը, որը շեշտում է միջազգային հաշտութեան և խաղաղութեան կարևորութիւնը։ Նշանաւոր է և այն, որ նոր ծրագրով կրկնապատկվում է վարչական մարմինների պատասխանատուութիւնը և սահմանափակվում կամայականութեան ծաւալը։

Ազատ-մտածողների ծրագիրը համակրելի է եղել գերմանական ազատամիտների համար, բայց վաղուց նա կարօտ էր բարեփոխութեան։ Գերմանական մամուլը և հասարակութիւնը ուշի ուշով հետևում են այդ ծրագրին վերաբերեալ բոլոր մանրամասնութիւններին։

ԹԻՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽԸ

Վանի և Ուրմիայի լճերի միջավայրերում, Թիւրքաց և պարսից սահմանագլխի վրա խաղաղութիւնը նորից խանգարված է այն աւազակային յարձակումների և աւերմունքների շնորհիւ, որ սանձարձակ կերպով կատարում են քրդական հրոսակները։

Վերջին ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, մի քանի անգամ Թիւրքաց սահմաններից անցել են դէպի Սալմաստի կողմերը քիւրդ աւազակային խմբեր, նոյն իսկ քրդական ամբողջ ցեղեր, աւարառութիւններ անելու նպատակով, բայց այնպիսի սիստեմատիկական արշաւանք, այնպիսի տևողական թշնամութիւն և վերջապէս այնպիսի յանդուգն դիտաւորութիւններ, որ այժմ են ցոյց տալիս քրդական զինւորված խմբերը,—երբէք չէ պատահել։

Պարսկաստանից ստացած մեր թղթակցութիւնները, որոնցից երկուսը միայն տպագրվեցին „Մշակի“ մէջ, վերին աստիճանի տխուր գոյներով են նկարագրում սահմանագլխի դրութիւնը և խաղաղ ժողովրդի վիճակը.—քրդական խմբերը, որոնց հետ միացել են և Համիդիէյի զինւորները, աջակցութիւն գտնելով տեղական թիւրք պաշտօնեաների կողմից, անցնում են սահմանը, միշտ ձգտելով մի և նոյն նպատակին.—սարսափ գցել Ատրպատականի սահմաններում, Սալմաստի մէջ ապրող խաղաղ ժողովրդի վրա, թալանել վանքերը, ինչպէս այդ մի քանի անգամ արել են Դերեկի վանքի հետ, թալանել գիւղերը, յափշտակել ոչխարների ամբողջ հօտեր, սպանութիւններ գործել, և այդպիսով զրկել Սալմաստը խաղաղութիւնից և դարձնել նրան մի Նոր Ալաշկերտ, մի Նոր Վասպուրական...

Դա ոչ թէ միայն անարդար վարմունք է դէպի տեղացի ազգաբնակութիւնը, այլ և մի այնպիսի յանդուգն վարմունք, որ խախտում է դէպի Հարևան պետութիւնը՝ Պարսկաստանը ունեցած քաղաքական յարաբերութիւնների տարրական պայմանները։

Պարսից կառավարութիւնը միշտ իրան օրինակելի է պահել դէպի Թիւրքիան. մենք երբէք չենք յիշում, որ երբ և իցէ պարսկական սահմաններից աւազակային խմբեր,—իսկ կանոնաւոր զօրքի մասին խօսք էլ չէ կարող լինել,—արշաւէին դէպի Թիւրքիայի սահմանները, դէպի Հարևան Վանի Նահանգը, թալանելու կամ սպանութիւնների նպատակով. և եթէ մի այդպիսի բան տեղի է ունեցել, անողները միշտ ենթարկվել են ամենախիստ պատժի պարսից բարձր կառավարութեան կողմից։

Մենք համոզված ենք, որ երբ պարսից բարձր կառավարութեան ականջին կը հասնի այդ բոլորը, երբ Թէհրանի կենտրոնական կառավարութիւնը կը տեղեկանայ, որ Հարևան Թիւրք իշխանութիւնը այդպէս յանդուգն կերպով խախտում է երկու երկիրների փոխադարձ յարաբերութիւնները, ահագին վնասներ հասցնելով տեղական խաղաղ ժողովրդին,—նա այլ ևս անտարբեր մնալ չէ կարող, և խիստ միջոցներ ձեռք կառնի ապահովելու իր հպատակների կեանքը, գոյքը, ամենակտրական միջոցների կը դիմի՝ ապահովելու իր երկիրը և պետութեան պատիւը։

Մենք իրաւունք ունենք այդպէս համոզված լինելու, ի նկատի ունենալով այն բարեկամական յարաբերութիւնը, և այն հովանաւորող քաղաքականութիւնը, որ միշտ ցոյց է տուել պարսից բարձր կառավարութիւնը դէպի Պարսկաստանում ապրող խաղաղ, կուլտուրայի ընդունակ և վերին աստիճանի օգտաւէտ տարրը, ինչպիսին է հայոց տարրը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Պետերբուրգի քաղաքային հիւանդանոցում օգոստոսի 16-ից մինչև 17-ը խօլերայով հիւանդներ կային 181 հոգի, աւելացան 56, մեռան 20, առողջացան 9 հոգի, մնում են 208 հոգի։

Ռումինիայի գործերի հաւատարմատարի հաղորդած տեղեկութեան համեմատ, ռումինական կառավարութիւնը կարգադրութիւն արեց փակել օգոստոսի 8-ից սահմանները՝ Մօլնիցի և Ունգէնի մէջ եղած տարածութեան վրա, նշանակելով սանիտարական քննութիւն և ապրանքների դէզինֆէկցիա։

Գալիցիայում, Լվօվի ռուսաց հիւպատոսի տը-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Լինել հասարակութեան հերոս, մի ամբողջ ազգի պաշտելի կուռքը, բազմամիլիոն ժողովրդի վշտերի, ձգտումների անարատ արձագանքը. կարողանալ արտայայտել, խօսքի և գործի վերածել այն, ինչ զգում, փայփայում է ամբողջ հասարակութեան, ամբողջ ազգութեան իւրաքանչիւր անդամ իր սրտի ամենաանմատչելի խորքերում. ընդունակ լինել՝ ցաւել, տանջվել ընդհանրութեան ցաւերով, ուրախանալ, ոգևորվել ընդհանրութեան ուրախութիւններով. կարճ ասած, իր անձնաւորութեամբ արտայայտել միլիոնաւոր անհատների, ամբողջ ազգերի պահանջները, յոյսերը և իդեալները, կարող էք երևակայել դրանից աւելի լաւ դեր մարդկային գործունէութեան մէջ, կարող էք ցոյց տալ աւելի բարձր դիրք, որին ընդունակ է հասնել մարդը, կարող էք մատնանիշ անել աւելի վեհ, աւելի սքանչելի տեսարան։

Ի հարկէ, ոչ։

Ահա թէ ինչու հասարակական հերոսը, լինելով մէկ անհատ, քաշ է տալիս իր յետևից միլիոնաւոր անհատներ, ամբողջ ազգեր, անյողդողդ մղելով նրանց դէպի լուսաւոր ապագան. ահա թէ ինչու հասարակութիւնը, ժողովուրդը՝ և մեծ և փոքր, և հարուստ և աղքատ, և ծանօթ և անծանօթ, աստուածացնում, կուռքի տեղ է պաշտում հերոսին...

Հերոսները լինում են զանազան մեծութեան, զանազան տեսակի։ Նախ, ընդունակութեան կողմից լինում են հերոսներ՝ սկսած առաջնակարգ հանճարներից և վերջացրած հասարակ տաղանդներով. երկրորդ, գործունէութեան տեսակի կողմից՝ կան հերոսներ կրօնական՝ Մովսէս, Լիւթեր. կան քաղաքական հասարակական՝ Գարիբալդի, Գլադստօն. կան գրականական—հրապարակախօսական՝ Վօլտեր, Ռուսսօ և այլն, և այլն։

Բոլոր կարգի և մեծութեան հերոսներին, ի նկատի առնելով նրանց գործունէութեան ամբողջ ընթացքը, կարելի է բաժանել երկու կարգի։

Առաջին կարգին պատկանող հերոսները մինչև իրանց կեանքի վերջին րոպէն մնում են հերոս, մնում են ժողովրդի պաշտելի կուռքը. չեն դաւաճանում ժամանակի ոգուն, իրանց անցեալին, անընդհատ վայելելով ամբողջ ազգի օրից օր աւելի ու աւելի աճող բուռն սէրը, անսահման յարգանքը... Այդպէս է, օրինակ, մեր օրերում Գլադստօն, որին անգլիական ազգը ամենայն իրաւամբ կնքել է «մեծ ծերունի» նախանձելի անունով։

Այդ տեսակ հերոսների մեռնելով, ամբողջ ազգը ճշմարիտ որ մնում է որբ, ընկնում է սուգի մէջ. մխիթարվելով միայն նրանով, որ հերոսը իսկապէս չը մեռաւ, այլ բաժանվեց միլիոնաւոր մասերի, որոնք, տեղափոխվելով միլիոնաւոր մարդկանց սրտերը, կը շարունակեն այնտեղից, որպէս մի-մի ճրագներ, լուսաւորել, տաքացնել խաւար կեանքը, սառած զգացմունքները...

Երանի, հազար երանի այդպիսի հերոսներին. մանաւանդ երանի, հազար երանի այն ազգերին և հասարակութիւններին, որոնց վիճակված է չը հիասթափվել իրանց պաշտելի հերոսների վերաբերմամբ...

Դառնանք երկրորդ կարգին պատկանող հերոսներին։ Դրանց վերջին օրերը ճակատագիրը թունաւորում է. դրանք իրանց գործունէութեան վերջին շրջանում, ծերութեան, կամ ծերութեան մօտ հասակում, դադարում են հերոս լինելուց, կորցնում են փառաւոր անցեալում ժողովրդի կողմից վայելած բուռն սէրը, անարատ յարգանքը. դրանք անսպասելի կերպով սկսում են դաւաճանել իրանց ամբողջ անցեալին, սկսում են սեփական ձեռքերով քանդել այն ամենը, ինչ որ հէնց իրանք էին կառուցել անցեալում՝ թափելով հսկայական ջանքեր, կրելով անթիւ հալածանքներ...

Այդ կարգի հերոսների համար է բանաստեղծը գրել իր գեղեցիկ խօսքերը.

Сжегъ все, чему поклонялся,
Поклонился всему, что сжигалъ.

Այդ օրից պատկերը բոլորովին փոխվում է։

Հասարակութեան և հերոսի մէջ եղած ներքին բարոյական կապը այլ ևս գոյութիւն չունի. նրանք իրար այլ ևս չեն հասկանում, իրար չեն համակրում, նրանք դժգոհ են իրարից... Ժամանակակից ոգին, ընդհանրութեան տանջող ցաւերը, ինտելիգենցիային յուզող մտքերը օտար, նոյն իսկ անտանելի են հերոսի համար։ Կեանքի թարմ ած տեղեկութեան համեմատ յուլիսի 31-ից մինչև օգոստոսի 6-ը խօլերայից հիւանդացան՝ 1088, մեռան 565 հոգի։

Անգօրի վիլայէթում, ասիական Թիւրքիայում, յուլիսի 24-ից մինչև 31-ը խօլերայով հիւանդացան 24, մեռան 22. Սիվասի վիլայէթում յուլիսի 29-ից մինչև 31-ը հիւանդացան 32, մեռան 10. Կոնիայի վիլայէթում հիւանդացան 6. Կոստամբուլի վիլայէթում յուլիսի 27-ից մինչև օգոստոսի 1-ը հիւանդացան 6, մեռան 5 հոգի. Մամուրէթ-Էլիազիս վիլայէթում նոյն ժամանակամիջոցում հիւանդացան 32, մեռան 14 հոգի։

Կրօնշտատում օգոստոսի 13-ին խօլերայով հիւանդներից մնացել էին 5 հոգի. օգոստոսի 14-ին հիւանդացաւ մէկ գեղջկուհի, առողջացան 2, մեռաւ 1, մնացին 3 հիւանդներ։ Ընդամենը, հիւանդութեան սկսվելուց, յուլիսի 8-ից, հիւանդացել են 237, առողջացել են 141, մեռել են 93 հոգի։

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

Օգոստոսի 12-ին

Մեր ներքին կեանքի ներկայ պայմանների մէջ, ասպարէզներից ամենափշոտը ուսուցչինն է։ Համեմատութեամբ, ամենակարևոր աշխատաւորը մեր մէջ ուսուցիչն է, բայց ամենից էլ նուազ ապահովվածը, ողորմելի չափով վարձատրվածը դարձեալ նա է։ Նա խրախուսված չէ ոչ թէ միայն նիւթապէս, այլ նրան չեն խրախուսում և ոչ իսկ բարոյապէս։ Մեր հոգևորականի աչքում նա աղա չէ, այլ մի վարժապետ, իսկ մեր աղա հարուստի աչքում նա մի կարեկցելի, ողորմելի ծառայ մարդ է, որին մարդիկ յանձնում են իրանց երեխաներին՝ կրթելու համար, ինչպէս որ էլ նրանք իրանց մէկ ուրիշ վարձկանի առաջն են անում իրանց անասունները՝ արածացնելու համար։

Այդպիսի մի չնչին համարմունքով, նրա հետ վարվում են ամենայն ազատութեամբ։ Հոգաբարձու, յաջորդ, առաջնորդ, մինչև իսկ տեսուչ նրան պահում կամ արձակում են, նայելով նրա հաճոյանալ գիտենալու չափին։ Այդ նկատման առջև, ուսուցչի ուսուցանողական արժէքը գրեթէ չքանում է։ Դուրս քշելու համար բաւական պատճառ է, եթէ ուսուցիչը հասարակական առօրեայ խնդիրների մէջ դժգոհացրած է լինում իր վրա իշխանաւոր կարգվածին։ Ուրիշ օրինաւոր, աւելի ծանրակշիռ պատճառ պէտք չէ ճանապարհ տալու համար նրան՝ գնալ ուր որ բախտը պատահեցնէ։ Ո՞ւմ փոյթը թէ նա ոչ քսակումը փող, ոչ էլ սրտումը հաստատուն յոյս ունի մի աւելի լաւ ու խղճմտաւոր հոգաբարձուի հանդիպելու։

Այդպէս վարվելը այդպիսի մի վաստակաւորի հետ հեշտ էլ է. սա նօտարական պայման չունի հայր-սուրբին կամ աղային նեղը կապելու համար, եթէ ոչ միայն մի հեռագիր կամ մի նամակ. իսկ հայր-սուրբը կամ աղան էլ երկիւղ չունեն, թէ երկնքից քար վեր կընկնի իրանց գլխին, իրանց անիրաւութիւնը պատժելու համար։

Դեռ հերիք չէ այդպէս արձակելը, ունկ ու պոչ կպցնելն էլ կայ։ Օրինակ, ասել թէ—նա հաւատալիքները ուրանում է. օրինակ, նա ընդում է, թէ դևերը եղջիւրաւոր, պոչաւոր կամ առհասարակ մարմնաւոր չեն։ Քննիչ հայր-սուրբը անկողմնապահ և լրջմիտ քննութեամբ արդէն հաստատել է ուսուցչի այդ մոլորութիւնը։—Կամ այսպիսի մի օդային մեղադրութիւն.—Նա կրօնական հոգի չէ ներշնչում աշակերտներին։—Այդ էլ այն վկայութիւնն է, ասես մի անցագիր, որ դնում են ուսուցչի հետ, իսկ և իսկ անցքերը նրա առջև փակելու դիտաւորութեամբ։

Այդպէս չէ եղել արձակելիս ուսուցիչներին Այվազեան արքեպիսկոպոսը։ Նա ևս անշուշտ ունեցել է իր ուսուցիչներից սրա ու նրա հետ անհամաձայնութեան կէտեր, գժտութեան պատճառներ և արձակելու առիթներ, բայց արձակելիս նա պահպանել է ոչ թէ միայն մարդավարութեան կանոնները, այլ և գգվել է ուսուցչի արժանապատուութիւնը, չէ ոտնահարել նրա դիրքը, քարով չէ տուել նրան։—«Ամենեցուն որոց զգիրս յայն արկանիցեն վկայեմք և հաւաստի առնեմք, զի պարոն N. N. ընդ ամս երիս, այսինքն ի սեպտեմբերէ 1875 ամի ցվերջ 1878 ուսումնական տարւոյս, վարեաց ի ճեմարանի աստ Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի զպաշտօն ուսուցչի ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան, եւ և վերակացուի, բազում գովութեամբ և շնորհակալեօք ի կողմանէ կառավարութեան ճեմարանիս, որոյ վասն և տուաւ նմա գիրս այս վկայութեան ի 21 ապրիլի 1878 ամի, ի Վաղարշապատ»։

Գիտնական և բարեկիրթ արքեպիսկոպոսի եղանակը նման չէ, ինչպէս տեսնում էք, անիրաւ հալածիչների և փարիսեցի հաւատաքննիչների եղանակին։ Այստեղ նուաստ կրքերից դրդված, նեղահայեաց ոգուց առաջնորդված, դեռ ոչ թէ արձակում, այլ ուղղակի վռնդում են ուսուցչին, մինչև անգամ, հնարաւոր կարծած դէպքում, ռոճիկից մի մասն էլ կտրելու վճռով։

Ինչո՞ւ են չարաչար և ի չարը գործ դնում իրանց յանձնված իշխանութիւնը նրանք՝ որոնք ժողովրդից են ընտրվում և իրաւասութիւն ստանում, կամ նրանք՝ որոնք իրանք ևս ժողովրդով են ինչ որ են և ժողովրդի տուրքով և նուէրներով են իրանց դասակարգը պահում և սնուցանում։

Իշխանութիւնը ստացած, իշխանութիւն տուողին արհամարհելը, նրա շահերը ոտի տակ տալը ապացուցանում է, մի կողմից, արհամարհողի անզգաստութիւնը, իսկ միւսից՝ տուողի անգիտակցօրէն գործելը։

Սակայն մի արշալոյս ծագում է։ Նշաններին նայելով, ժողովրդի գիտակցութիւնը սկսել է զարթնել և արթնանալ։ Յուսանք, որ հետևաբար անզգաստութիւնն ևս միւսների մէջ նուազելու և վերանալու շաւղի մէջ մտնի։ Այդ դէպքում, ժողովրդի հարազատ վաստակաւորը, ուսուցիչը, կը ճանաչվի իր բոլոր արժէքով և կը վարձատրվի իրան արժանաւոր չափով։

Մի օր, մի իշխանաւոր, ներկայացնելով իր սենչին, այսպէս էր գովում նրան.—«սա գիտնական չէ, գրքեր չի գրում, բայց բարի մարդ է, հայրաբար խնամք կը տանի ձեր վրա»։

Հայրաբար խնամք տանելը սաստիկ զգալի մի կարիք է այսօր։ Ցանկանք, որ մեր բարի մարդիկը գործով արդարացնեն իրանց վրա դրված յոյսերը և այն գովածի նման դուրս չը գան փչկած հատիկ, ինչպէս ասել է մէկը, առողջ հատին եղբայրասպան։

Ա. Մ. Եզեկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, օգոստոսի 22-ին

Անհրաժեշտ եմ համարում մի քանի խօսք ասել այն «դօկումենտի» առիթով, որ տպվեց «Արձագանքում» և որի մասին Աբգար Յովհաննիսեան երեք օր առաջ մի աշխարհ սասանեցնող սպառնալիքով ազդարարեց իր ընթերցողներին։ Ի՞նչ է այդ դօկումենտը։ Մի յօդուած իմ ձեռքով գրված հանգուցեալ Գրիգոր Արծրունու դէմ։ Թէ ինչու եմ ես այդ յօդուածը գրել հանգուցեալի դէմ, այդ բացատրելու համար կարևոր է նախ բացատրել մի ուրիշ բան, այն է, թէ ինչպէս եղաւ, որ ես ընկայ «Արձագանքի» շրջանը և ինչու ես մի ժամանակ հակառակութիւն ունեցայ Արծրունու դէմ։

Ես նոր էի մտել գրականական ասպարէզը, երբ հանգամանքների բերմամբ «Մշակը» դադարեց, և Արծրունին ժամանակաւորապէս հեռացաւ արտասահման։ Իմ գրականական գործունէութիւնը ես սկսել էի «Մշակի» մէջ և վճռել էի, հարկաւ, այնտեղ էլ շարունակել։ Դադարեց «Մշակը» 1884 թւականին, և ես մնացի առանց ասպարիզի։ Սակայն ինձ համար անհրաժեշտ էր գոնէ առժամանակ յարել մի թերթի, ահա ինչու ես ընդունեցի «Արձագանքի» առաջարկութիւնը՝ աշխատակցել նրան։ Այդ ժամանակ «Արձագանքը» շաբաթաթերթ էր և նրա ուղղութիւնը շատ բաներում հակասում էր ներկայ «Արձագանքի» ուղղութեանը։ Ով որ ծանօթ է այդ լրագրի անցեալին, ով կարդացել է նրա 1882—1886 թւականների համարները, կարող է նկատած լինել, որ նա ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ «Մշակի» ստուերը։ Հասարակական կեանքի գլխաւոր խնդիրներում Աբգար Յովհաննիսեան հետևում էր Արծրունու ուղղութեանը։ Այդպէս, Թիւրքաց հայերի դրութեան խնդիրը, կաթողիկոսական ընտրութիւնների հարցը գրեթէ միատեսակ էին լուծվում «Մշակի» և «Արձագանքի» մէջ, կամ, ճիշդն ասած, վերջինը կրկնում էր այն, ինչ որ ասում էր առաջինը։ Բաւական է միայն յիշել, թէ «Արձագանքը» որքան ընդդէմ էր հանգուցեալ Մակար կաթողիկոսի թեկնածութեանը, ինչպէս պաշտպանում էր հանգուցեալ Ներսէս Վարժապետեանին և ինչպէս, «Մշակին» հետևելով, կռւում էր մեղուականների դէմ։

Բայց չը գիտեմ ինչ պատահեց, հէնց որ Մակարը կաթողիկոս հաստատվեց, Աբգար Յովհաննիսեան մոռացաւ իր դաւանած սկզբունքները և սկսեց շողոքորթել նրանց, որոնցից կարելի էր մի բան սպասել։ Այդ ժամանակ արդէն Արծրունին վերադարձել էր արտասահմանից և «Մշակը» վերանորոգել։ Հարկաւ, հանգուցեալ հրապարակախօսի սուր տեսողութիւնից չէր կարող խոյս տալ «Արձագանքի» փոփոխամտութիւնը, և այդ ժամանակից նրա և Աբգար Յովհաննիսեանի մէջ բացվեց գաղափարների տարբերութիւնը։ Մէկը հաստատ համոզմունքների տէր հրապարակախօս, միւսը առանց իդէալների խմբագիր, առանց գրչի պուբլիցիստ։ Անկարելի էր, որ այդ երկու հակասութիւնները հաշտվէին միմեանց հետ։ Իսկ ես միամիտս, որ այդ ժամանակ «Արձագանքի» գլխաւոր աշխատակիցը, քարտուղարը և շատ անգամ de facto խմբագիրն էի, կարծում էի, որ հնարաւոր է այդ տեսակ հաշտութիւն։ Կարծում էի, թէ դեռ ուշ չէ, թէ դեռ Աբգար Յովհաննիսեան կարող է սթափվել և նորից հետևել այն ժամանակակից ուղղութեանը, որի պարագլուխն էր Արծրունին։

Ահա հէնց այս է եղել իմ սխալը։ Գրելով «Արձագանքում», ես հոգով ու սրտով դէմ եմ եղել նրա ուղղութեանը և միշտ բացարձակ կռւել եմ նրա խմբագրի հետ։ Յայտնի բան է, այդ կռիւը եղել է ներքին և միշտ ընթերցողների աչքից թաքնված։ Աստուծոյն է միայն յայտնի, թէ ես ինչքան եմ աշխատել «Արձագանքը» ազատել մեղուականների ձեռքից, բայց ես մենակ եմ եղել, իսկ իմ հակառակորդները բազմաթիւ։ Եւ փոխանակ ես նրանց փոխելու, դառն է խոստովանվել, երբեմն նրանք են ինձ վրա ազդել։ Սակայն այդ ազդեցութիւնը այնքան զօրեղ չէ եղել, որ ինձ կուրացնէր գաղափարական տեսակէտից։ Բացարձակ ասում եմ, որ ամբողջ հինգ, թէ վեց տարի «Արձագանքին» աշխատակցելով, ես ոչ մի անգամ և ոչ մի տող գրած չեմ այդ լրագրում «արձագանքական» ուղղութեամբ։ Ընդհակառակը, այդ լրագրի սև հիւսուածքի մէջ ես եղել եմ մի սպիտակ փուշ, որ միշտ ծակել է «արձագանքականների» աչքը։

Ապացոյցներ շատ կան։ Բաւական է ասել, որ «Արձագանքի» մէջ տպվեց իմ «Արամբին» տենդենցիոզ վէպը, որի գաղափարը մի ապտակ էր հայոց եկեղեցու փարիսեցիներին, սադուկեցիներին և մաքսաւորներին և որի «Արձագանքի» մէջ տպվելը զարմանք պատճառեց նոյն իսկ Կ. Պոլսի հայ լրագիրներին։ Բաւական է ասել և՛ այն, որ ես երկու ամառ «Արձագանքի» խմբագիրը լինելով, այդ լրագրի գոյնը այնպէս փոխեցի, որ նրա արբանեակները չը ճանաչեցին նրան։ Այն ինչ՝ Յովհաննիսեան այնքան երկչոտ էր, որ, արտասահմանից վերադառնալով, փոխանակ ինձ տհաճութիւն յայտնելու, հրապարակօրէն շնորհակալութիւն յայտնեց։ Իսկ ես հետևեալ օրը նրա երեսին ծաղրեցի այդ շնորհակալութիւնը։

Բայց և այնպէս եղել է մի կարճ միջոց, որ «Արձագանքի» մթնոլորտը ինձ կուրացրել է։ Ահա այդ միջոցին էր, որ հանգուցեալ Արծրունին, մի բանակռւի առիթով ինձ հարուածեց «Մշակում» և ես այդ միջոցին գրեցի մի քանի յօդուածներ նրա դէմ։ Ի՞նչ անէի. ամեն օր Աբգար Յովհաննիսեան և նրա արբանեակները ճանճերի պէս բզզում էին անընդհատ, թէ Արծրունին այս է ասել քո մասին, այն է ասել։ Իսկ մի բանկային դիրեկտոր, որի պաշտօնն է միշտ կրկնել Յովհաննիսեանի սրախօսութիւնները և որի գոյութիւնը իսկապէս մի հարցական նշան է, ամեն օր հնարում էր լուրեր, որոնց նպա-

---

հոսանքները, հասարակութեան ոգևորող յոյսերը, իդէալները արձագանք չեն գտնում նրա սրտում։ Հին, վնասակար գաղափարները, յետադէմ մտքերը, անարդար քայլերը, որոնց դէմ մի ժամանակ կատաղի կռիւ էր մղում հերոսը, համակրելի են դառնում նրա համար։ Հասարակական գաղափարների և շահերի հետ առնչութիւն չունեցող մարդիկ, որոնք առաջ վախում, սարսափում էին հերոսից, որպէս խաւարը լոյսից, բարեկամութեան, սիրոյ ձեռք են մեկնում նրան... Հերոսը, որի մի շարժումը պատճառում էր անզուսպ ոգևորութիւն, բուռն էնտուզիազմ, որի լոկ խօսքը օրէնք էր մարդկանց համար, մնում է մենակ, առանց պատուաբեր զինակիցների, առանց հետևողների, որպէս մի վիթխարի տաճար, առանց Աստուծոյ, որպէս մի հսկայ եկեղեցի, առանց աղօթողների։ Աղօթողներ չեն այն փոքրաթիւ բաղդախնդիրները, որոնք, աղօթելու պատրուակով, դատարկ տաճարը մտած, կողոպտում են նրան։

Այո, ընթերցող, հերոսը թէև կենդանի, բայց և այնպէս գոյութիւն չունի հասարակութեան համար. նա մատնվել է մոռացութեան, նա կենդանի թաղված է... Ճշմարիտ է, ցաւալի, չափից դուրս ցաւալի է տեսնել նախկին հերոսին այդ դրութեան մէջ. բայց միւս կողմից, վերին աստիճանի սփոփիչ, վերին աստիճանի մխիթարական է, երբ տեսնում էք, թէ ինչպէս հասարակութիւնը ձեռք է բերել այնքան ինքնաճանաչութիւն, հասարակական շահերի այնքան գիտակցութիւն, որ չէ ցանկանում ստրկաբար հետևել իր այն հերոսին, որը դադարել է հերոս լինելուց, որը այլ ևս արձագանք չէ տալիս ժամանակի պահանջներին, ձգտումներին, որը այլ ևս չէ կարողանում լսել և ուրիշներին լսելի դարձնել հասարակական սրտի բաբախումները, այլ դաւաճանելով իր անցեալին, դաւաճանելով հասարակական գաղափարներին, դարձել է օտար թէ ժամանակի համար, թէ հասարակութեան համար... Վերցնենք, օրինակ, Պարնելլին, իռլանդիայի այդ «չօծված թագաւորին», ինչպէս անուանում էր նրան եւրոպական ամբողջ մամուլը։

Քանի Պարնելը իռլանդացիների դարևոր պահանջների, իղձերի, յոյսերի հաւատարիմ թարգման էր. քանի նա իռլանդական դատը պաշտպանում էր եզակի փաստաբանի ամբողջ տաղանդով, Պարնելը ժողովրդական հերոս էր, չօծված թագաւոր էր, իռլանդական կուսակցութեան միակ պարագլուխն էր։

Հէնց որ նա մազաչափ դաւաճանեց իռլանդական խնդրին, հէնց որ նա այլ ևս չը կարողացաւ հասկանալ ժամանակի պահանջները,—նոյն Պարնելը կորցրեց իր ոյժը, կորցրեց իր ազդեցութիւնը, իր անունը, չը նայելով իր հսկայական փառաւոր անցեալին, չը նայելով, որ դեռ երէկ նա չօծված թագաւոր էր։ Եւ այսօր անգլիական պարլամենտում իռլանդական ազգը 10 ի չափ պարնելականների դէմ ունի 80-ի չափ հակապարնելական իռլանդացի պատգամաւորներ...

Այդպէս գիտէ պատժել ինքնաճանաչութեան հասած ժողովուրդը իր ամենամեծ զաւակին, իր հերոսին, հէնց որ նա դադարում է լինել ժողովրդի ձգտումների արտայայտիչը, ժամանակակից պահանջների արձագանքը։ Այդպէս պատժվեց և հանճարեղ «երկաթէ կանցլերը», նշանաւոր Բիսմարկը, երբ նա, քաղաքական աշխարհում տարիների ընթացքում փառաւոր յաղթութիւններ տանելուց յետոյ, վերջը անձեռնհաս գտնվեց հասկանալ ժամանակի կուլտուրական պահանջները, անկարող եղաւ ըմբռնել և արտայայտել գերմանական ժողովրդի նոր ցաւերը.. Այդպէս է եղել պատմութեան մէջ, այդպէս էլ կը լինի միշտ։ Եւ իւրաքանչիւր ինքնաճանաչութիւն ունեցող հասարակութիւն այդպէս էլ կը պատժի իր թէկուզ ամենաժողովրդական, ամենապաշտելի հերոսին, հէնց որ նա անընդունակ կը դառնայ հասկանալ ժամանակի ոգին, ժամանակի պահանջները, հէնց որ նա տրամադրութիւն ցոյց կը տայ դաւաճանել իր լուսաւոր անցեալին, և ոգևորվել խաւարով...

Ժողովուրդը ոչխարների հօտ չէ, որ հետևի իր առաջնորդին և այն ժամանակ, երբ առաջնորդը տանում է դէպի անդունդը, դէպի յետ, դէպի խաւարը...

Ժամանակակից ոգի, ընդհանրութեան պահանջներ, թարմ գաղափարներ,—ահա այն թալիսմանը, ահա միակ միջոցը, որով բոլոր ինքնաճանաչ ազգերը ղեկավարվելով՝ անյայտ մահկանացուներին հերոս են դարձնում և ընդհակառակն, ամենափառաւոր անցեալով հերոսներին անխնայ անդունդ գլորում...

Օրինակներ՝ ինչքան կամենաք։

Անողոք է հասարակական դատաստանը։

Նա երբէք չէ ընկճվում, երբէք չէ կաշառվում։

Շիրվանցի

տակն էր ինձ թշնամացնել Արծրունու դէմ։

Գուցէ ընթերցողը ինձ հարցնի, թէ ինչ միտք ունէր Աբգար Յովհաննիսեանի համար ինձ թշնամացնել Արծրունու հետ, քանի որ ինքը թշնամի էր։ Բանն այն է, որ ես «Արձագանքի» աշխատակիցների մէջ համարվում էի թունդ մշակական։ Յովհաննիսեանի համար, ի հարկէ, այնքան նշանակութիւն չունէին իր բոլոր արբանեակների թշնամական գրուածները Արծրունու դէմ, որքան մի մարդու գրուած, որին նա համարում էր Արծրունու աշակերտ և որը «Մշակի» մէջ էր սկսել իր գրական գործունէութիւնը։ Ահա ինչու զանազան խնտրիգներ էին լարում ինձ Արծրունու հետ բոլորովին թշնամացնելու համար։

Ինչ և է. նրանց աջողվեց մի կարճ միջոց օգտվել իմ տաքարիւնութիւնից և ինձ գրգռել հանգուցեալի դէմ։ Այդ ժամանակ ահա ես գրեցի այն յօդուածը, որ իբրև «դոկումենտ» այժմ տպում է Աբգար Յովհաննիսեանը իր թերթում։ Սակայն ես իսկոյն փոշմանեցի գրածիս մասին և խնդրեցի Յովհաննիսեանին չը տպել, և նա չը տպեց։ Այսօր արխիւների օգնութեան կարօտ զառամեալը քրքրում է իր զամբիւղը և հրապարակ հանում այդ յօդուածը, մի բան, որ, հարկաւ, ընդունված չէ գրականական էտիկայի օրէնքներով և որ ընդունակ են անելու Յովհաննիսեանները, որոնց համար վաղուց ջնջված են ամեն տեսակ բարոյական օրէնքներ...

Բաւական չէ, որ տպում է, այլ և յօդուածիս տակը դնում է մի ծանօթութիւն, ուր նա ասում է, թէ «այդ յօդուածը չը տպեցինք 1891 թւին» լրագրական էտիկային հետևելով։ Աբգար Յովհաննիսեան 1891 թ. դնելով, ուզում է ընթերցողներին հասկացնել, թէ յօդուածը գրված է այն տարին, երբ ես գնացի հանգուցեալ Արծրունու յօբելեանի հանդիսին մասնակցելու, ուրեմն մեր հաշտվելուց յետոյ։ Դա մի անամօթ սուտ է։ Յօդուածը գրված է յօբելեանից առաջ և, եթէ չեմ սխալվում, 1888 թւին է գրված, Րաֆֆիի մահուան թւականին։ Այդ մասին ակնարկութիւն կայ նոյն իսկ յօդուածի մէջ։

Այսպէս թէ այնպէս, յօդուածիս գրելուց անմիջապէս յետոյ ես փոշմանել եմ և չեմ թողել տպելու։ Իսկ այն բոլորը, որ ես գրել և տպել եմ Գրիգոր Արծրունու դէմ, ջնջվել է այն օրից, երբ ես գնացի յօբելեանի հանդիսին հաշտվելու համար։ Այն պահին, երբ տօնվում էր հանգուցեալի 25 ամեայ յօբելեանը, այն պահին, երբ «Արձագանքը» իր բոլոր աշխատակիցներով գիշեր-ցերեկ խորհում էին ինչպէս խափանել այդ յօբելեանը, երբ Աբգար Յովհաննիսեան ծրագիրներ էր յօրինում (յիշում էք պարոն) յօբելեարին հասարակութեան աչքին արատաւորելու, Նրան վնասակար գործիչ հրատարակելու, ես թքեցի «Արձագանքի» և Նրան շրջապատողների վրա և համարձակ գնացի յօբելեանի ուրախութեանը ուրախակից լինելու։

Դա մի հասարակական ապտակ էր, որ ես տւեցի բոլոր արձագանքականներին։ Տւեցի ոչ անձնականից դրդված, այլ որովհետև ինձ ստիպեց այն ներքին գաղափարական համակրութիւնը, որ ես ունէի դէպի Գրիգոր Արծրունին և որ երբեք չէ խզվել իմ սրտում, չը նայելով անցողիկ տհաճութիւններին։ Այնուհետև իմ գաղափարական բարեկամութեանը, մինչև Նրա մահը, չը խառնվեց և ոչ մի անձնական հակառակութիւն։

Այդ օրից ահա «արձագանքականները», որ առանց այդ էլ ինձ ատում էին, սկսեցին հալածել ինձ։ Ատում էին, որովհետև ես միշտ նրանց հետ կռւի մէջ էի, միշտ նրանց երեսին էի տալիս իրանց քստմնելի արարքները, միշտ կրկնում էի թէ նրանց գործունէութիւնը հիմնված է վատթար կրքերի և շահամոլութեան վրա։

Աբգար Յովհաննիսեանը չէ կարող հերքել այս բանը։

Այսքանը իբրև պատասխան «Արձագանքի» առաջ բերած «դոկումենտին» և նրա մեղադրանքին, թէ իբր ես փոփոխամիտ եմ։

Գալով Նրա սպասաւոր Ահրիմաններին, թող այդ զեռունները չը նեղանան ինձանից, որ ես նրանց յիշոցները պէտք է արհամարհեմ։

Կան արարածներ, որոնց հետ խօսել և որոնց մասին գրելը օրինաւոր մարդկանց շրջանում ընդունված չէ... իմ կռիւը խոշոր ցեցերի դէմ է և ոչ թէ իրանց համոզմունքները վաճառող եղկելի մարդկանց դէմ...

Շիրվանզադէ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, օգոստոսի 19-ին

Թուրքաց գաղթականներին հայրենիք վերադարձնելու համար յուլիսի 23, 28 և օգոստոսի 2-ին «Մշակի» խմբագրութիւնից ուղարկած մի-մի հարիւր ռուբլին, ընդամենը 300 ռուբլի, վարչութիւնս ստացած լինելով, պարտք է համարում իր խորին շնորհակալութիւնը յայտնելու յարգելի խմբագրութեանդ և նուիրատուներին։

Փոխ-նախագահ՝ Ա. Ղազաղեանց

Գործավարի տեղ՝ Ս. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ երեկոյեան, օգոստոսի 24-ին, Ներսիսեան դպրոցի հին հոգաբարձութիւնը ժողովի հրաւիրվեց, լսելու վեհափառ կաթողիկոսի կոնդակը, որով հաստատված է նոր ընտրված հոգաբարձութիւնը։ Այդ նիստը հին հոգաբարձութեան վերջին նիստն է։ Նոր հոգաբարձութիւնը այս օրերս ժողով կը գումարի և կը մտնի պաշտօնի մէջ։

—

Մեզ հեռագրում են Օդեսայից, օգոստոսի 23-ից. «Հանգուցեալ Յովհաննէս Խատիսեանի մարմինը այսօր նաւով ուղարկված է Բաթում։ Բաթում կը հասնի օգոստոսի 26-ին»։ Ինչպէս լսում ենք, հանգուցեալի մարմինը Թիֆլիս կը բերվի կիրակի առաւօտ, օգոստոսի 28-ին, և այդ օրն էլ տեղի կունենայ թաղումը։

—

Մեզ հաղորդում են Շուշուց, որ Այվազեան Կարապետ եպիսկոպոսը, որը հեռագրով կանչված էր Էջմիածին, օգոստոսի 19-ին ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին, ուր, ինչպէս յայտնի է, հաւատաքննական ատեան է կազմվելու, Շուշու թեմական դպրոցի գործը քննելու համար։ Այդ նոյն գործի համար կանչված են Շուշու թեմական դպրոցի երկու հոգաբարձուները և կրօնուսոյց քահանան, որոնք արդէն Էջմիածին են գտնվում։ Էջմիածին է գնացել նոյն գործի պատճառով և թեմական դպրոցի տեսուչ Լ. Սարգսեան։ Իսկ Կիւրեղ վարդապետը վաղուց արդէն Էջմիածին է։

—

«Շաւիղ» շաբաթաթերթը նկարագրելով, թէ ինչ ողորմելի պատկեր են ներկայացնում պարսկահայերի մէջ տգէտ քահանաները, հետևեալ տողերն է գրում. «Այսօր մեր հայ գիւղացու թմբութեան, նրա տնտեսական ու բարոյական վիճակի հաստատուն հիման վրա չը կանգնելու ու լուսաւորութեան, կրթութեան գործը կրիայի քայլերով առաջ գնալու էական կէտը տգէտ քահանաների շատութիւնը ու կրթված, արժանաւոր քահանաների բացակայութիւնն է պատճառը։ Այցելէք մեր գաւառները ու գիւղերը, հէնց մեր լուսաւորութեան կենդրոն համարվող քաղաքները և դուք ինչ կը տեսնէք, ամեն տեղ զուրկ մի հատ արժանաւոր քահանայից. մի տեղում նա փորը հաստացրած կատարեալ վաշխառուի դեր է կատարում, մի ուրիշ տեղում բահը դրած ուսին ջրում է իր արտը կամ այգին և փողոցային ամեն տեսակ լուտանքներ, հայհոյանքներ թափում է այն մարդկանց գլխին, որոնք յանդգնում են ձեռք տալ նրա ջրին, և մի այլ տեղում նա միացած աղայի հետ կեղեքում, մաշում է խեղճ գիւղացուն իր քէֆի համեմատ և վերջապէս ամեն տեղ նա իր տգիտութեամբ հեշտացնում է իր միամիտ հօտի գայլերին զոհ դառնալը»։

—

Երեքշաբթի, ամսիս 23-ին, կայացաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան արտակարգ նիստը, որ նուիրված էր մի քանի անյետաձգելի խնդիրների քննութեան։ Նիստին նախագահող Ա. Քալանթարը, յայտնելով ընկերութեան պատւաւոր անդամ Յովհաննէս Խատիսեանի մահը, առաջարկեց յարգել հանգուցեալի յիշատակը ոտքի կանգնելով, և ապա կարդաց մի զեկուցում հանգուցեալի գործունէութեան մասին։ Ժողովը որոշեց. 1) մի առանձին նիստ նուիրել յատկապէս Խատիսեանի գիւղատնտեսական գործունէութեանը, 2) Նրա մեծադիր պատկերը կախել ընկերութեան դահլիճում և 3) խնդրել ընկերութեան փոխ-նախագահին, որ նա ընկերութեան անունից մի դամբանական խօսի հանգուցեալի դագաղի վրա։ Այնուհետև անցնելով ուրիշ պարապմունքներին, ժողովը որոշեց ուղարկել այգեգործական դպրոցի կառավարիչ Կլաուսէնին Պետերբուրգ ներկայ լինելու միջազգային մրգաբուծական ցուցահանդիսին և ժողովին։

—

Պետերբուրգի բարձրագոյն դպրոցներում եղած ազատ տեղերի և այնտեղ մտնող ցանկացողների թւի մասին մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ միջին թւով իւրաքանչիւր ազատ տեղի համար եօթը կանդիդատներ կան։ Այդ առիթով «Нов. Время» լրագիրը հետևեալ նկատողութիւնն է անում. «Այդ դպրոցներն արդեօք բաւարարութիւն տալիս են բարձր ուսման պահանջին։ Մասնագիտական բարձրագոյն դպրոցներում տեղեր չը կան բոլոր ցանկացողների համար։ Օրինակ, 1893 թւին Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում ընդունվել են միայն 168 հոգի այն 545 անձինքներից, որոնք եկել էին մրցման քննութիւն բռնելու, Խարկովի տեխնոլոգիական ինստիտուտում 153 հոգի 219 անձինքներից, Մոսկվայի տեխնիկական դպրոցում—140 հոգի 220-ից, Նովօ-Ալէքսանդրեան ինստիտուտում – 66 հոգի 122-ից։ Չը նայելով որ բարձրագոյն դպրոցներ մտնել ցանկացողների մեծ մասին մերժում են և չեն ընդունում, մասնագիտական բարձր ուսում ստանալ ցանկացողների թիւը տարուց տարի շատանում է»։

—

Այս ամառվայ ընթացքում Թիֆլիսի մասնաւոր և արքունական թատրոններում ներկայացումներ էր տալիս մալորոսների մի դրամատիկական խումբ։ Այդ խումբը այսօր, հինգշաբթի, ինչպէս մեզ հաղորդում են, խաղալու է մի հետաքրքրական պիես, «Сватанье на гончарныцiхъ» անունով։ Խաղին մասնակցելու են խմբի գլխաւոր ոյժերը։ Լաւ առիթ է ներկայանում ցանկացողների համար ծանօթանալու առհասարակ մալորոսների խաղի հետ։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Մանգլիսի հարաւային կողմը գտնվում է մի փոքրիկ գիւղ, ուր բնակվում են գաղթական ռուսներ։ Այդ փոքրիկ գիւղում ամսիս 15-ին, գիշերվայ ժամը 11-ից մինչև 2-ը մեծ հրդեհ եղաւ։ Երեք ժամվայ ընթացքում հրդեհը ոչնչացրեց 4 մարդկանց դէզերը, որոնցից, ինչպէս ասում են, մօտ 5000 պուդ ցորեն էր սպասվում, մօտ 4000 ռուբլի արժողութեամբ։ Պատմում են, որ դէզերը կրակ է տւել տեղացի մի ռուս, որը անցեալ ձմեռ կռւած է եղել դէզատէրերի հետ, և այդ կռւի ժամանակ սպառնացել է, որ նրանց տները պէտք է կրակ տայ։ Չարագործը կալանաւորված է»։

—

ԵԱԼՏԱՅԻՑ մեզ գրում են. «Արդէն հաղորդեցինք, որ Եալտայից $1\frac{1}{2}$ վերստ հեռու գտնվող իր սեփական ամարանոցում յանկարծակի վախճանվեց յայտնի հարուստ Ստեփան Լիանօզեանը։ Ամսիս 16-ին հանգուցեալի մարմինը ուղարկվեց Աստրախան։ Ամսիս 16-ին Եալտայի գաղթական հայերը բերանացի խնդիրքով դիմեցին հանգուցեալի որդուն՝ Գէորգ Լիանօզեանին, Մոսկվայի քահանայ Պապովի և բժիշկ Ալաջալեանի միջոցով, որ եթէ կարելի է Եալտայում մէկ փոքրիկ աղօթատուն շինի ի յիշատակ իր հանգուցեալ հօր, ինչպէս ինքը հանգուցեալը մէկ տարի առաջ յայտնել էր այդ մասին իր ցանկութիւնը, այն պայմանով, որ յիշեալ աղօթատունը կամ եկեղեցին կրի ս. Ստեփաննոս անունը։ Գ. Լիանօզեանը խոստացել է. այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվեց Եալտայում և ուրախութիւն պատճառեց խեղճ դասակարգին»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 17-ի գիշերը, աւազակները՝ թւով 6 հոգի, Շուշուց Եւլախ տանող ճանապարհին յարձակվում են կառքերով և ֆուրգոններով անցնող ճանապարհորդների վրա։ Կողոպտում են մի ռուս քահանայի, վերցնելով նրանից 125 ր., մի հայ վաճառականից խլում են 700 ր. և ժամացոյց ու ոսկէ գօտին։ Կռւի ժամանակ սպանվում է մի թուրք եասաուլ, մի կառապան և մի ուրիշ հայ երիտասարդ։ Աւազակները չեն բռնված։ Գործը յանձնված է ոստիկանութեան»։

—

ՂԱԶԱԽ գաւառի Բարան գիւղից մեզ գրում են. «Ահա մի ամսից աւելի է, որ խոշոր անասունների մէջ յայտնվել է «ազար» կոչված հիւանդութիւնը, և մեծ կոտորած է անում։ Այնպիսի տուն կայ, որը լծի բոլոր կենդանիներից զրկվել է։ Ինչպէս գիւղի հասակաւոր մարդիկ են պատմում, առաջ այդ «ազար» կոչված հիւանդութիւնը յայտնվում էր 6 կամ 7 տարին մի անգամ, բայց այս վերջին տասը տարվայ ընթացքում համարեա ամեն տարի կրկնվում է, միայն այն զանազանութեամբ, որ եթէ գարնանը մի գիւղի կենդանիների մէջ է յայտնվում, աշնանը մի ուրիշ գիւղի մէջ է երևում։ Եւ այսպէս շարունակվում է գիւղից գիւղ»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Այստեղի նախկին ուսուցիչ Պապ Վարդանեանցին քահանայացնելու կուսակիցները՝ իրանց ձեռնարկութեան մէջ աջողութիւն չը գտնելով, դարձեալ մի նոր ստորագրութեան թերթ են շրջեցնում հասարակութեան մէջ, որով խնդրում են սինօդին Վարդանեանցին քահանայ ձեռնադրել իբր կրօնուսոյց տեղական ծխական ուսումնարանների և իգական ու արական գիմնազիաների հայ մանուկների համար։ Զարմանում և ցաւում ենք այն պարոնների վրա. կրքից բղխած իրանց այդ արարքներին մի օր վերջ պէտք է տան, թէ ոչ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՏԻՆԳ ԼՕՐԴԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԴԷՄ

Բաւական ժամանակ է արդէն, որ անգլիական հասարակական կարծիքը կռիւ է մղում լօրդերի ժողովի դէմ, որը իր բացասական գործունէութեամբ ապարդիւն է դարձնում համայնքների ժողովի բոլոր ջանքերը՝ այս կամ այն րէֆօրմներ մտցնելու երկրի մէջ։

Ինչպէս լրագիրները հաղորդում են, օգոստոսի 14-ին Հայդ-Պարկում մի մեծ միտինգ տեղի ունեցաւ լօրդերի ժողովի դէմ։ Այդ միտինգը ամենամեծներից չէր, որովհետև միտինգին հաւաքված մօտ 100 հազար ժողովրդի կէսն էր միայն մասնակցում ցոյցերին։ Սակայն այդքան մարդկանց ցոյցն ևս մեծ տպաւորութիւն էր գործում։ Ցոյց անողների խմբերը դրօշակներով և վահաններով մի քանի ժամ շարունակ գումարվում էին Հայդ-Պարկում, ուր հռետորները պէտք է ճառեր խօսէին։ Դրօշակների վրա գրված էին՝ «Լօրդերի ժողովը պէտք է ոչնչանայ» «Ժողովրդի կամքը պէտք է բարձր լինի ամեն բանից», «Լօրդերի ժողովը անօգուտ է և վտանգաւոր», «Աստուած թող փրկէ Իրլանդիան», «Արժանաւորութիւն և ոչ ծագում», և այլն և այլն։

Բոլոր հռետորները միաձայն ապացուցանում էին լօրդերի ժողովի վերացման անհրաժեշտութիւնը, մի ժողովի, որը կամայական կերպով խեղդում է ժողովրդի ձայնը, և պահանջում էին, որ կառավարութիւնը վճռական միջոցներ ձեռք առնի ժառանգական օրէնսդիրների դէմ։ Մանաւանդ մեծ բազմութիւն էր խմբվել այն ամբիոնի շուրջը, որտեղից խօսում էր իրլանդական յայտնի պատգամաւոր Օբրիէն։ Մեծ աջողութիւն ունեցաւ նոյնպէս միտինգի նախագահ Գօնտի ճառը, որը ապացուցանում էր, թէ «հանճարը երբէք ժառանգական չէ լինում, իսկ խելագարութիւնը —միշտ»։

Վերջը մի որոշում կայացաւ, որով ժողովը ցաւ յայտնելով, որ կառավարութիւնը ոչինչ որոշ խոստմունքներ չէ տալիս այն միջոցների վերաբերմամբ, որ նա մտադրութիւն ունի ձեռք առնել լօրդերի ժողովի դէմ, հրաւիրում է կառավարութեանը՝ վճռական քայլ անել լօրդերի ժողովը վերացնելու համար։ Ապա ցոյց անողները վճռեցին դիմել Անգլիայի բոլոր ընտրողներին խնդրելով, որ ընտրութիւններին ձայն չը տան այնպիսի կանդիդատների համար, որոնք լօրդերի ժողովի կողմնակից կը լինեն։

Անգլիական ազգը այնքան սիրում և յարգում է իր հիմնարկութիւնները, որ հազիւ թէ ընդունի ցոյց անողների պահանջը՝ ոչնչացնել լօրդերի ժողովը։ Սակայն այդ նոյն ազգը ընդունակ է եղել միշտ րէֆօրմներ մտցնել իր հիմնարկութիւնների մէջ, բաւարարութիւն տալով ժողովրդի պահանջներին։ Լրագիրները հաղորդում են, որ մի օրինագիծ է մշակված, որով լօրդերի ժողովի անդամները իրաւունք չը պէտք է ունենան երկրորդ անգամ մերժել համայնքների ժողովի կողմից երկու անգամ ընդունված օրինագիծը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ օգոստոսի 26-ից մինչև 27-ը (նոր տոմարով)

Գերմանիայում խոլերայով հիւանդանալու 78 դէպքեր են եղել. մեռել են 32 հոգի։

—Վիէննայից հեռագրում են, որ կօշուտի արձանի համար ունգարացիների մէջ սկսված ստորագրութեան պատճառով, ունգարական ռումինները ևս, իրանց կողմից, ստորագրութիւն են սկսել արձան կանգնեցնելու Եանկօին, որը 1848 թւին ռումինական յայտնի պարագլուխներից մէկը էր։

—Բէյտէրի գործակալութեանը հեռագրում են, որ Կիպրոսի քրիստոնեայ ազգաբնակութիւնը մեծ երկիւղի մէջ է անգլիական բերդապահ զօրքը Մալտա տեղափոխելու պատճառով։ Լուր է տարածված նոյնպէս, որ Կիպրոսը կը վերադարձնվի Թիւրքիային։ Հաստատ աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, Կիպրոսի բերդապահ զօրքի տեղափոխութիւնը քաղաքական որ և նշանակութիւն չունի։

—Շվէյցարական կառավարութիւնը խտալիա է աքսորում բոլոր խտալացի անարխիստներին։

—Անգլիական կառավարութիւնը արգելեց բոլոր դեղագործներին պատրաստել պայթող նիւթեր։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 22 օգոստոսի։ Ամերիկական բամբակի էժանութեան պատճառով, ասիական բամբակը համեմատաբար վատ է ծախվում. աւելի պահանջվում է բուխարական բամբակը 7 ր. 15 կոպէկով։ Տօնավաճառի առևտուրը վերջանում է։

ՕԴԷՍԱ, 22 օգոստոսի։ Երէկ, Օդէսայի հարիւրամեակի նախընթաց օրը, մայր եկեղեցում մատուցվեց պատարագ և հոգեհանգիստ կատարվեց քաղաքի հիմնադիր Ամենաբարեպաշտուհի Թագուհի Կայսրուհի Եկատերինա II-ի, Նրան յաջորդող թագաւոր Կայսրների, նոյնպէս և խէրսօնի թեմի սրբազան առաջնորդների և քաղաքի բարեկարգողների համար։ Մաղթանքից յետոյ, քաղաքային դումայի շինութեան մէջ դումայի ձայնաւորների հանդիսաւոր նիստ կայացաւ։ Քաղաքին մատուցված են ուղերձներ և շնորհաւորութիւններ զանազան քաղաքներից, շատ հասարակութիւններից և առանձին անձինքներից. երեկոյեան բոլոր եկեղեցիներում տեղի ունէր հսկումն, և ապա դումայի դահլիճում և քաղաքային ժողովրդական աուդիտորիայում տեղի ունէին հրապարակական ձրի ընթերցանութիւններ «Օդէսայի հարիւրամեակի մասին»։

ԱԹԷՆՔ, 22 օգոստոսի։ Մօտ 130 օֆիցէրներ և զինուորներ քարուքանդ արին «Ակրօպօլիս» լրագրի խմբագրի տպարանը և բնակարանը՝ յունաց զօրքի մասին վիրաւորական յօդուածներ տպելու համար։ Կալանաւորված են 20 գրողներ։

ՕԴԷՍԱ, 22 օգոստոսի։ Այսօր անցաւ Մեծ իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչ Բաթումից դէպի հիւսիս։—Մայր եկեղեցում եղած պատարագից և մաղթանքից յետոյ, սկսվեց հանդիսաւոր թափոր Եկատերինեան հրապարակի վրա, ուր տեղի ունեցաւ Եկատերինէ II կայսրուհու արձանի հիմնարկութիւնը։ Քաղաքի ներկայացուցիչները պսակներ դրեցին իշխան Վօրօնցովի և դուքս Րիշիլիօի արձանների վրա. մայր եկեղեցու հրապարակում հիւրասիրվեցին զօրքերը, ձրի ճաշեր տրվեցին ժողովրդին, տեղի ունեցան հրապարակական ընթերցանութիւններ, ժողովրդական զբօսանքներ, մանկական տօներ և ձրի ներկայացումներ թատրօններում։ Քաղաքը լուսաւորված է. ծովի վրա և զբօսավայրերում հրախաղութիւն եղաւ։ Դուման վճռեց Օդեսայի հարիւրամեակը յաւերժացնել՝ բանալով երկրագործական, ծովագնացական, տեխնիկական և գեղարուեստի դըպրոցներ։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 23 օգոստոսի։ Վիսկօնսին և Մինէզօտա շտատներում անտառային հրդեհներից այրվեցին մօտ 1000 մարդիկ. քարուքանդ եղան 21 աւաններ. վնասը մօտ 12 միլիօն դօլարի է հասնում։

ՎԻԷՆՆԱ, 23 օգոստոսի։ Երէկ հասաւ այստեղ ֆինանսների մինիստր Վիտտէ։

ՓԱՐԻԶ, 23 օգոստոսի։ Այստեղ եկաւ Մեծ իշխան Ալէքսի Ալէքսանդրովիչ։

ԼՕՆԴՕՆ, 23 օգոստոսի։ Պէնգ-Եանգի մօտ չինական զօրքերի տարած յաղթութեան համար, գեներալ Եին և 700 օֆիցէրներին պարգևներ են շնորհված։ Եապօնացիների կորուստը այդ ճակատամարտում հասնում էր 5000 հոգու. չինացիների կորուստը աննշան է։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 23-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	60 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	$42^1/_2$ ›
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 ›	70 ›
Ոսկի — — արժէ . .	7 ›	47 ›
Մաքսային կուպօններ — . .	149 ›	50 ›
Արծաթ — — — . .	— ›	— ›
Բորսային դիսկօնտ — . .	5 ›	7 ›
Պետ. բանկի $5^0/_0$ տոմս 1 շրջանի .	— ›	— ›
— — — — 2-րդ .	— ›	— ›
— — — — 3-րդ . .	— ›	— ›
$4^0/_0$ պետական րէնտա.	— ›	$95^1/_4$ ›
$5^0/_0$ ոսկեայ րէնտա 1884 թ. . . .	159 ›	— ›
$4^1/_2$ ոսկեայ փոխառութիւն. . .	— ›	— ›
Արևելեան $5/_0$ փոխառ. 1-ին շրջ.	— ›	— ›
— — — 2-րդ —	— ›	— ›
— — — 3-րդ —	— ›	— ›
— — — 4-րդ —	— ›	— ›
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.	239 ›	50 ›
— — երկրորդ —	226 ›	25 ›
Պետական երկաթուղային րէնտա.	101 ›	— ›
$4^1/_2$ րէնտա	— ›	— ›
$4^0/_0$ ներքին փոխառութեան . . .	$95^5/_8$ ›	— ›
$5^0/_0$ գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— ›	— ›
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	— ›	— ›
$4^1/_2{}^0/_0$ վկայակ. գիւղ. հող. բանկի.	101 ›	75 ›
$4^1/_2{}^0/_0$ գրաւական թղթեր կալուած.	— »	— ›
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	152 ›	50 ›
— — — թղթադ. .	— ›	— ›
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	$101^1/_8$ ›	— ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$101^1/_8$ ›	— ›
Օդեսայի — —	101 ›	50 ›
Թիֆլիսի — —	— ›	— ›
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	100 ›	— ›
— — Քութայիսի —	100 ›	50 ›

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՐԵԱՏԱԽՏԱԿՆԵՐ

ԶՕՐՍՏՕՂԱՆԻ

Հայերէն գրութեան համար։ Գինը մատչելի։ Դիմել՝ Թիֆլիս, Միքայէլեան կամուրջ, ՄԱԳԱԶԻՆ ՄԱՏԻՆԵԱՆՑԻ. (№ 97) 1—5

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ

5-րդ կարգի, որը շարունակ 12 տարի վարել է պաշտօն թէ ռուսաց և թէ հայոց դպրոցներում, ցանկանում է ստանալ աւագ ուսուցչի կամ լոկ ուսուցչի պաշտօն հայոց դպրոցներում, դասախօսում է ռուսաց լեզուից, թուաբանութիւնից, Ռ. և Հ. վայելչագրութիւններից և գծագրութիւնից։

Հասցէն՝ Тифлисъ, Сололаки, Орловская улица, № 28.

(№ 97) 1—2

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ուսումնարանում օգոստոսի 29-ից սկսվում է ընդունելութիւն աշակերտուհիների։

Ցանկացողները մանել այդ ուսումնարանը կարող են դիմել Գանօվսկայա փողոց, տուն Շաղինովի № 25, ուր տեղափոխվել է յիշեալ ուսումնարանը։

(№ 97) (25, 27) 1—2

ՄԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ

ցանկանում է ունենալ գիշերօթիկ աշակերտներ. բնակարան, կերակուր, և ուրիշ յարմարութիւններ։ Մատչելի գներով։

Հասցէն իմանալու համար դիմել՝ Միջին փողոց, ոսկերիչ Կարապետ Սերովբեանցի խանութը։ 1—1

ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ Հոգաբարձութիւնը յայտարարում է, որ ուսուցչական խումբը արդէն ԿԱԶՄՎԱԾ է, խնդիրքներ ուսուցչական պաշտօն ստանալու համար՝ այլ ևս չեն ընդունվում։ Խնդրատուները այլ ևս պատասխանի չը սպասեն։

(№ 97) 1—2

Եօթը տարի ուսուցչութեան պաշտօն վարած գ. կարգի մի ցէնզաւոր ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է հայոց լեզուի դասեր ունենալ գաւառական քաղաքների հայ ծխական դպրոցներից մէկում. պայմանների մասին դիմել. Въ Большой Караклисъ, священнику Хорену Ханзатянцъ.

(№ 97) 1—3

Կենտրոնական գրավաճառանոցում ծախվում են

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

1) „ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ“ 1890 թ.։ Գինը 60 կոպ.

2) „ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵԶԱՆՈՒՄ“. 1890 թ.։ Գինը 20 կոպ.

(№ 88) 4—10

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Սոյն օգոստոսի 24-ից բացվում է կար ու ձևի ուսումնարան, որտեղ ընդունվելու են զանազան պատուէրներ թէ երեխաների և թէ օրիորդների ու կանանց զգեստների։ Ընդունվում են նոյնպէս աշակերտուհիներ երթևեկ և գիշերօթիկ. պայմանների մասին դիմել իմ ուսումնարանում, Պուշկինսկի և Արմեանսկի բազարի անկիւնում։

(№ 96 հ. չ.) 1—3

ԳՕՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ ԿՕՆՑԵՐՏԸ

Տեղի կունենայ շաբաթ օր, օգոստոսի 27-ին, Ջմերային կլուբում։ Խումբը բաղկացած է 36 տղամարդուց և 34 կանանցից։ Տոմսակները ծախվում են Գօրի, Դօնդարօվի մագազինում։

2—2

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ կօնսիստօրիայի տանն մէջ նշանակված է աճուրդ 2-ին սեպտեմբերի սոյն ամսի, առանց կրկնաճուրդի, վարձով տալու համար էջմիածնապատկան մի կրպակն Բաղդասխանայի, 5-րդ քաղաքամասում։

2—3

Անդամ կօնսիստօրիայի՝ Համազասպ վարդապետ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՌՕՍՍԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրում է 5.000 ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսական պրէմիա 30 ր. 80 կոպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ր. գումարների մէկ անձի կեանքի համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խոլերայից և այլն։

Յունվարի 1-ին 1894 թւի «Ռօսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխի։

Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների դիվիդէնտը 1893 թւի համար—$12^0/_0$ է.։

Ապահովագրութեան համար պատուիրութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։

(№ 85) 5—15

Ազգիս վեհափառ Հայրապետը հրամայել է գործածել Հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ, իմ աշխատասիրած

„ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ“։

Ցայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի մեզ այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Ելիզաւէտեան փողոց, տուն № 45։ Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.։ Ճանապարհածախսը գնողների վրա է։

Սարգիս քահանայ Բէգնազարեանց

11—25 (№ 81

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԷ-ԼԱ-ՑԱՐ ԵՒ ԸՆԿ.

կատարում է հետևեալ օպերացիաները.

1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ՝ փոխատուութիւն.
2) I, II, III խաղարկութեան տոմսակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՌՈՒԲԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.
3) փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.
4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
6) Ընդունում է in casso վէկսելներ և ուրիշ դօկումէնտներ։

Լիազօր՝ Ս. Գ. ՊԱՎԼՕՎ ԹԻՖԼԻՍ, Սէրգիէվսկայա փողոց, № 1.
Գանձակում գործակալն է՝ Նիկօլայ Կարամանովիչ Օհանէսով։

(№ 15) (Հ.) 29—50

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Августа 1894 г. Типографія Канцел. Главноначальств. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.